ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

2015 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....4

ԲԱԺԻՆ 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը 4

ԲԱԺԻՆ 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 8

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները.....8

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները.....10

ԲԱԺԻՆ 3.«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները.....11

3.1.Գազափոխադրմանհամակարգ 11

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ.....11

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում.....11

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ.....16

3.2. Գազաբաշխման համակարգ.....19

3.2.1. Նոր բաժանորդների միացում 19

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում.....20

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման Ծառայությունների ոլորտներում ներդրումներ 20

ԲԱԺԻՆ 4. Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա գնումների 27

ԲԱԺԻՆ 5. Իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները.....27

ԲԱԺԻՆ 6. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 28

6.1. Փաստացի կատարված ներդրումներից
նվազեցված ներդրումների ծավալը.....28

6.2. Սակագնով փոխհատուցման ենթակա
ներդրումների ծավալը 30

Եզրակացություններ 32

Հղումներ օգտագործված նյութերին.....33

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2016 թվականի աշխատանքային ծրագրի 29-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2015 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագրի մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի գազի համալիրի վերականգնման և զարգացման ներդրումային ծրագիրը [Որոշում 2, Որոշում 3] և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը [Հաշվետվություն, Տեղեկատվություն 1, Տեղեկատվություն 2]:

ԲԱԺԻՆ 1.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել տարբեր սարքավորումների, ժամանակակից տեխնիկա տեխնոլոգիաների, մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2015 թվականի ընթացքում իրականացնել 10 035,3[1] մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 1 234, 1 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 1 714,4 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 434,2 մլն դրամ,
- նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 391,4 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 2 410,2 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 3 456 մլն դրամ:

- այդ թվում՝ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ 302,4 մլն դրամ:

- 2013 թվականի ընթացքում ներդրումային ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 395,0 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն, բացառության մարդատար ավտոմեքենաների ձեռբերման գումարների:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման, վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսվում էր ներդնել նախատեսվող ներդրումների 12%-ը, որի 45%-ը նախատեսվում էր ուղղել №25 գազահորի շինարարությանը: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև շահագործվող 4 գազահորերի ընդլայնում և վերականգնում, էլեկտրատնտեսության վերականգնում, վերազինում և այլ աշխատանքների իրականացում:

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվող ներդրումների մեծ մասը, 55%-ը, նախատեսվում էր ուղղել վնասված մայրուղային գազատարերի վերականգնման, վերատեղադրման և փոխարինման աշխատանքներին: Նախատեսվում էր նաև կառուցել և արդիականացնել գազաբաշխիչ կայանները, չափիչ հանգույցները և այլ ինժեներական ենթակառուցվածքներ, վերականգնել գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների էներգամատակարարման համակարգերը, կառուցել, վերականգնել և արդիականացնել էլեկտրաքիմիական պաշտպանության կայանները:

Ներդրումային ծրագրի 34%-ը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով՝ այդ թվում հաշվառման համակարգի

արդիականացման նպատակով ձեռքբերել սարքավորումներ, գործիքներ, իսկ հաշվառման ցուցանիշների բարելավման նպատակով ներդնել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիաներ: Նշված ուղղությամբ համաձայնեցված ծավալի 69%-ը նախատեսվում էր ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև օպերատորների տների վերակառուցման և աշխատասենյակների կառուցման աշխատանքներ և այլն:

Ներդրումների 4%-ը նախատեսված էր 9 000 նոր բաժանորդների մոտ գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրման նպատակով:

Գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսված ներդրումների զգալի մասը, 96%-ը նախատեսված էր գազաբաշխման համակարգի վնասված գազատարերի վերականգնման և վերատեղադրման համար: Նշված ուղղությամբ նախատեսվում էր նաև բնական գազի կենցաղային հաշվիչները և տեղադրման հանգույցները տեղափոխել՝ մոտեցման և սպասարկման համար անարգել և մատչելի տարածք, կառուցել էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ և այլն:

Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումների շրջանակում նախատեսվում էր 12 000 գազասպառողների մոտ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում:

Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով նախատեսվող ներդրումների 38% նախատեսված է գազաբաշխման համակարգի հաշվառման համակարգի արդիականացման և ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք բերել համակարգչային և կազմակերպչական տեխնիկա, գրասենյակային գույք, մեքենա մեխանիզմներ, վերականգնել ընկերության արտադրական և վարչական շենքերը, ընդլայնել և արդիականացնել ընկերության կապի համակարգը, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ և այլն:

ԲԱԺԻՆ 2.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2015 թվականի ընթացքում կատարել է 9 459,3 մլն դրամի կապիտալացվող աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 9 144,4 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 315,0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեց-ված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2015թ.	2015թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցմանն ու ընդլայնմանն ուղղված ներդրումներ	1 234,1	935,5	76%	600,9	584,4	1 185,3
2	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1 714,4	1 253,8	73%	1 057,8	210,0	1 267,7
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	434,2	351,2	81%	339,7	11,8	351,5

Աղյուսակ 1

(շարունակություն)

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեց-ված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2015թ.	2015թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
4	Նոր բաժանորդների միացմանն ուղղված ներդրումներ	391,4	455,4	116%	455,4	-	455,4
5	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված	2 410,2	2 455,6	102%	2 098,7	391,2	2 489,9
6	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	3 456,0	3 297,9	95%	3 168,8	135,1	3 303,9
6,1	*Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում*	*302,4*	*300,7*	*99%*	300,7	-	
7	2013 թվականի ընթացքում ներդրումային ծրագրից դուրս իրականացված ներդրումներ	395,0	395,0	100%	-	395,0	395,0
8	2014թ.-ից 2015թ. փոխանցված անավարտ ներդրումներ	-	-	-	10,5	-	
	Ընդամենը	**10 035,4**	**9 144,4**	**91%**	**7 731,8**	**1 727,5**	**9 459,3**

Համաձայն Աղյուսակ 1-ի ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 91%-ով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2015 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ**	**1727,5**	18%	**1677,4**	18%
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**3283,9**	35%	**3066,3**	32%
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**2109,2**	22%	**2109,2**	22%
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**2338,7**	25%	**2291,4**	24%
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	245,7		203,6	
4.2	*նյութական ծախսումներ*	1394,1		1390,4	
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	695,8		695,8	
4.4	*նախագծային աշխատանքներ*	-		-	
4.5	*այլ*	3,1		1,6	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9459,3**		**9144,4**	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումներն իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ՝ սեփական ուժերով:

ԲԱԺԻՆ 3.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1. Գազափոխադրման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում գազափոխադրման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ

2015 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1 234,1 մլն դրամ՝ նոր գազահորերի կառուցման, շահագործվող հորերի ընդլայնման և վերականգնման, կոմպրեսորային արտադրամասի, էներգահամակարգի վերականգնման և վերազինման և այլ նպատակներով: Փաստացի իրականացվել են 1185,3 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել *«№25 գազահորի շինարարություն»* ենթաուղղությամբ նախատեսված աշխատանքներ՝ 557,7 մլն դրամ արժեքով, ինչպես նաև *«Շահագործվող գազահորերի վերականգնում և արդիականացում», «Շահագործվող ճնշակայանի և արդյունաբերական հրապարակի վերականգնում և վերակառուցում», «Էներգահամակարգի վերականգնում և վերազինում»* ենթաուղղություններով նախատեսված աշխատանքներ՝ 377,8 մլն դրամ արժեքով: Ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են Աբովյանի ԳՍՊԿՄ N18 գազահորի վերանորոգմանն ուղղված 9,8 մլն դրամի ներդրումներ, որոնք համաձայնեցված չեն ներդրումային ծրագրով:

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 1 714,3 մլն դրամ՝ մայրուղային գազատարերի կառուցման, գործող գազատարերի վերականգման, վերատեղադրման և փոխարինման, գազաբաշխիչ

կայանների և չափիչ հանգույցների վերականգնման և արդիականացման, էլեկտրամատակարարման համակարգի, շանթարգելների և սարքավորումների հողանցման կոնտուրների վերականգնման նպատակով: Փաստացի իրականացվել են 1 267,7 մլն դրամի ներդրումներ:

Այս ենթաուղղության «Մայրուղային գազատարերի կառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 155,9 մլն դրամ: Ամբողջ ծավալով իրականացվել և շահագործման են հանձնվել՝ Մարտունու ԳԲԿ-ի տեղափոխման աշխատանքները:

Մայրուղային գազատարերի վերականգնում, վերատեղադրում և փոխարինում ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 936,8 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 648,7 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 644,1 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Կարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ Dպ1000մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 6,0մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 5,7 մլն դրամի վերականգնման աշխատանքներ:

«Ղազախ-Բերդ-Սևան Dպ1000մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 82,5մլն դրամ: Փաստացի իրականացվել են 81.2 մլն դրամի ներդրումների, որի արդյունքում 80,7 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Ղազախ-Երան Dպ1000մմ (կմ18-կմ121) մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 145,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 75,1 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 74,9 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Ղազախ-Երևան II գիծ Dպ700մմ (կմ121-կմ174) մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 18,6 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 7,7 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 7,6 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

*«Արզնու ԳԲԿ-ի կողմնատար-գազատարի ստորգետնյա անջատիչ փականի փոխարինում Dպ300մմ»*ենթաուղղությամբ համաձայնեցված էր 9 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 5,2 մլն դրամի աշխատանքներ:

*«Վեդու ԳԲԿ-ի կողմնապար-գազապարի սպորգեպնյա գնդային փականի փոխարինում Dy200մմ»*ենթաուղղությամբ համաձայնեցված էր 5,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 4,4մլն դրամի աշխատանքներ:

«Ղազախ-Երևան-Ջրաբեր-ԳԲԿ-2 I գիծ Dy700մմ մայրուղային գազապարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 22,7 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 12,3 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում 12,2 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Ղազախ-Երևան-ԳՍՊԿ Dy500մմ մայրուղային 124կմ-ում գազապարի գազուղու վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 4,1 մլն դրամի: Փաստացի իրականացվել են 3,8 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 3,7 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Արզնի-Աշտարակ Dy350մմ գազապարի16կմ-ում գծային փականի տեղադրում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 14,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 13,5 մլն դրամի աշխատանքներ:

«Իլյիչևսկ-Երևան մայրուղային գազապարի գազուղիների վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 7,2 մլն: Փաստացի իրականացվել են 5,8 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 5,7 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Իլյիչևսկ-Երևան Dy700մմ (կմ62) և Երևան - Արարատ (կմ21) Dy350մմ մայրուղային գազապարերի միջև Dy500մմ միջակապի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 23,8 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 38,1 մլն դրամի աշխատանքներ:

«Երևան-Արարատ Dy350մմ մայրուղային գազապարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 96,4 մլն: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 92,9 մլն դրամի աշխատանքներ:

«Երևանի շուրջ Dy1200մմ օղակաձև գազապարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 28,7 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 29,2 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում համաձայնեցված ծավալով աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Կարմիր Կամուրջ-Ալավերդի Dպ700մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 38,4 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 21,6 մլն դրամի աշխատանքներ:

«Վանաձոր-Ալավերդի Dպ700մմ մայրուղային գազատարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 187,3 մլն: Փաստացի իրականացվել են 161,4 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 159,5 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Վանաձոր-Գյումրի Dպ700մմ մայրուղային գազատարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 20,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 9,2 մլն դրամի աշխատանքներ:

«Գյումրի-Արմավիր Dպ700մմ մայրուղային գազատարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 65,1 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 12,6 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 12,3 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Դիլիջան-Վանաձոր Dպ500մմ մայրուղային գազատարի գազուղիների վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 9,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 7,4 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 7,2 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Սևան-Վարդենիս Dպ500մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 25,7 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 15,1 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 15,0 մլն դրամի աշխատանքներ:

«Վարդենիս-Ջերմուկ Dպ300մմ մայրուղային գազատարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 16,3 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 11,3 մլն դրամի աշխատանքներ:

«Ստեփանակերտ-Գորիս Dպ700մմ մայրուղային գազատարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 9,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 7,3 մլն դրամի աշխատանքներ:

«Գորիս-Նախիջևան Dպ700մմ մայրուղային գազատարի (Գորիս-Սիսիան հատվածում) վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցված էր 3,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 0,7մլն դրամի աշխատանքներ:

«Գորիս-Կապան-Քաջարան Dպ500մմ մայրուղային գազատարի գազուղու վերականգնում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 15,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 15,2 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 15,1 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Անգեղակոթ-Ջերմուկ Dպ500մմ մայրուղային գազատարի վերականգնում” ենթաուղղությամբ համաձայնեցվածէր 15,5 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել11,5 մլն դրամի ներդրումներ:

Նոր գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ տեխնոլոգիական շինությունների կառուցում ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 121,9 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 119,8 մլն դրամի աշխատանքներ, որից 112,8 մլն դրամի աշխատանքներ շահագործման են հանձնվել:

«Տեղ գյուղի ԳԲԿ-ի և կողմնատար-գազատարի կառուցում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 50 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 40,8 մլն դրամի ներդրումներ:

*«Մարտունու ԳԲԿ-ի կառուցում (տեղափոխում ջրածածկման տարածքից)»*ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր իրականացնել 71,9 մլն դրամ: Նախատեսվող աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

«Գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ ինժեներական ենթակառուցվածքների վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 405,5 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 299,6 մլն դրամի ներդրումներ, որից 299,1 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Տեխնոլոգիական սարքավորումների և չափիչ գծերի փոխարինում ԳԲԿ-ներում (ֆիլտրեր, ճնշման կարգավորիչներ, փականներ, ապահովիչ արտանետիչ կափույրներ, հանգույցներ և այլն)» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 198,5 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 111,8 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 111,2 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Չափիչ հանգույցների վերականգնում, վերակառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 207,0 մլն դրամ՝ 22 չափիչ հանգույցներում աշխատանքների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես,«Սևան-1, «Սևան-3», «Արմավիր», «Նաիրի», «Աշտարակ», «Կողբ» չափիչ հանգույցների վերականգնման և

վերակառուցման ուղղությամբ իրականացվել և շահագործման են հանձնվել 187,8 մլն դրամի ներդրումներ:

«ԳԲԿ-ների և ՉՀ-ների էլեկտրամատակարարման համակարգի, շանթարգելների և սարքավորումների հողանցման կոնտուրների վերականգնում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր 16,3 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են:

«ԷՔՊ համակարգի վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 78,0 մլն դրամ: Մասնավորապես համաձայնեցված ներդրումների ծավալում նախատեսվում էր 26,0 մլն դրամ ուղղել 100 հսկիչ-չափիչ կետերի ձեռքբերմանը և տեղադրմանը: Նշված ներդրումներն իրականացվել են 25,2 մլն դրամով: Այս ենթաուղղությամբ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան էլեկտրամեկուսիչների տեղադրման նպատակով նախատեսված 52,0 մլն դրամից իրականացվել է 1,8 մլն դրամի աշխատանքներ, որոնք շահագործման չեն հանձնվել:

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2015 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Տվյալ ավարտված աշխատանքների ծավալում ներկայացված են 7,7 մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ՝ որոնք ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն:

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգում 2015 թվականին նախատեսվում էր 434,2 մլն դրամով ձեռք բերել և տեղադրել միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգեր՝ իրենց լրակազմող արտադրական մասերով, ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիա, ճնշման և ջերմաստիճանի դյուրակիր առաջադրիչներ, գազի խտության չափիչ սարքեր, գազանալիզատորներ, հաշվիչներ տարբերմեքենա-մեխանիզմներ, ԳԲԿ-ներում օպերատորների համար կառուցել աշխատասենյակներ, վերանորոգել տներ և այլն:

Փաստացի իրականացվել են 351,5 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 351,2մլնդրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Հաշվառման համակարգի վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 36,8 մլն դրամ՝ «FloBoss-103» ծախսաչափերի ձեռքբերման և տեղադրման (իրենց լրակազմող մասերով) նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել 16,6 մլն դրամ ընդհանուր արժեքով 8 ծախսաչափեր:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդնում» ուղղությամբ նախատեսվում էր 51,8 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Փաստացի ձեռք են բերվել 102,6 մլն դրամի հիմնական միջոցներ, որից 28,3 մլն դրամը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

«Расходомер» ծրագրային փաթեթի ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1,5 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 1,8 մլն դրամ արժեքով ծրագրի օգտագործման իրավունք:

«Ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային դյուրակիր առաջադրիչի ձեռքբերում» ենթաուղղություններով նախատեսվում էր ձեռք բերել 2 էլեկտրոնային և մեկ ջերմաստիճանի դյուրակիր ճշտիչներ՝ 12 մլն դրամ ընդհանուր արժեքով: Փաստացի ձեռք են բերվել մեկական սարքեր՝ համապատասխանաբար 10,1 և 2,4 մլն դրամ արժեքով:

«Բնական գազի խտության չափիչ սարքի ձեռքբերում և տեղադրում՝ «Այրում», «Սևան-2», «Շաղափ», «Արմավիր» և ԳՍՊԿ-ի ՉՀ-ում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 19,0 մլն դրամ՝ 5 սարքերի ձեռքբերման ուղղությամբ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել համաձայնեցված քանակով սարքեր՝ 45,2 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«ԳԲԿ-ների և չափիչ հանգույցների փակ տարածքներում գազանալիզատորների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 9,2 մլն դրամ՝ 100 սարքերի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 82 հատ գազանալիզատորներ՝ ընդհանուր 5,9 մլն դրամ արժեքով:

«Էլեկտրական ճշտիչներով համալրված ռոտացիոն հաշվիչների ձեռքբերում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 5 գազահաշվիչների ձեռքբերում՝ 10,0 մլն դրամ ընդհանուր արժեքով: Փաստացի ձեռք են բերվել համաձայնեցված քանակով հաշվիչներ՝ 8,8 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ձեռք բերել 299,7 մլն դրամ ընդհանուր արժեքով 14 միավոր տարբեր մեքենա-մեխանիզմներ: Փաստացի ձեռք են բերվել 18 մեքենա-մեխանիզմներ՝ 205,8 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Էքսկավատոր-հիդրավլիկ անիվավոր, 0.25մ3 և 0.8մ3 շերեփի տարողությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 78,8 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 72,3 մլն դրամ արժեքով ԷՕ-2621.ԴՏ/Բելառուս-82.1.N808214610 և HYUNDAI R180W-9S էքսկավատորներ:

«Շարժական օդային մղիչ 8-10 մ3/րոպե արտադրողականությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 5,4 մլն դրամ: Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 4,9 մլն դրամ արժեքով օդամղիչ կայան:

«Ջրահեռացման ագրեգատ տրակտորի կառուցվածքի վրա» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 4,1 մլն դրամ: Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 9,9 մլն դրամի ներդրումներ:

«Շարժական էլեկտրազոդիչ ագրեգատ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 47,4 մլն դրամ՝ երկու ագրեգատի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 4,4 մլն դրամ արժեքով մեկ մեքենա:

«Բուլդոզեր 125 կՎտ հզորությամբ» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 48,0 մլն դրամ: Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 37,2 մլն դրամ արժեքով մեքենա:

«Բեռնատար-մարդատար վթարային մեքենա ՈՒԱԶ տիպի» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 30,0 մլն դրամ՝ հինգ մեքենաներ ձեռքբերելու նպատակով: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 32,0 մլն դրամ արժեքով 5 հատ ՈՒԱԶ-390995-440:

«Մարդատար մեքենայի» ձեռքբերման ուղղությամբ համաձայնեցված էր 6,0 մլն դրամ՝ 1 մարդատար մեքենա ձեռքբերելու համար, փաստացի ձեռք է բերվել Լադա 21214-010-42՝ 5,05 մլն դրամ արժեքով:

«Շենքերի և շինությունների վերակառուցում և վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 46,0 մլն դրամ արժեքով օպերատորների հինգ աշխատասենյակների պատրաստում և վեցօպերատորների տան վերականգնում:

Փաստացի իրականացվել են 26,4 մլն դրամի ներդրումներ, որից 26,2 մլն դրամի ակտիվներ հանձնվել են շահագործման:

«Գազափոխադրման համակարգի այլ ուղղություններով ներդրումներ» ուղղության մնացած ենթաուղղություններով 2015 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 68,1 մլն դրամ ծավալով, որոնք նույնպես նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

3.2. Գազաբաշխման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.2.1. Նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2015 թվականին նախատեսված էր 354,5 մլն դրամ 9 000 կոմպլեկտ բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերման և տեղադրման նպատակով և 36,9 մլն դրամ գազաբաշխիչ ցանցի նոր գազատարերի կառուցման (ցանցի ընդլայնում) նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և տեղակայվել 9 419 գազահաշվիչներ՝ 455,4 մլն դրամ ընդհանուր արժեքով: Նոր բաժանորդների միացման արդյունքում 2016 թվականի տարեսկզբի դրությամբ բնական գազի բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 670 826 **[Տեղեկատվություն 2]**:

Հաշվի առնելով, որ գազաբաշխիչ ցանցի ընդլայնման ուղղությամբ Երևան քաղաքի Նորաշեն թաղամասում 2014 թվականին իրականացված 34,2 մլն դրամի ներդրումները համաձայնեցված են 2015 թվականի ներդրումային ծրագրով, ուստի դրանք նույնպես դիտարկվել են ավարտված ներդրումների ծավալներում:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 61,8 մլն դրամ ծավալով, որոնք նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր ներդնել 2 410,2 մլն դրամ՝ գազատարերի վերականգնման և վերակառուցման, բնական գազի կենցաղային հաշվիչների և տեղադրման հանգույցների տեղափոխման, էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայանների կառուցման, վերականգնման և արդիականացման ուղղությամբ:

Փաստացի ներդրվել է 2 489,9 մլն դրամ, որից 2 455,5 մլն դրամի աշխատանքները ավարտվել են:

«Գազաբաշխման համակարգում գազատարերի վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 2 324,5 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 2478,9 մլն դրամ, որից 2 444,6 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են:

«ԷՔՊ կայանքների կառուցում, վերականգնում և արդիականացում» ենթաուղղություններով 2015 թվականին նախատեսվում էր 7,4 մլն դրամ ներդնել 3 կայանքների կառուցման և 25 չափիչ կետեր ձեռք բերելու և տեղադրելու ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 11,0 մլն դրամի ներդրումներ, որից 10,9 մլն դրամը հանձնվել է շահագործման: Այս ծավալում 4,1մլն դրամն ուղղվել է թվով 3 նոր կայանների կառուցմանը:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 36,8 մլն դրամ ծավալով, որոնք նույնպես նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

Գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2015 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ

Այս նպատակով 2015 թվականին հաշվառման համակարգի վերականգնման, վերակառուցման և արդիականացման, գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և

գույքի ձեռքբերման, ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման, շենքերի և շինությունների վերականգնման և վերակառուցման, կորպորատիվ տեխնոլոգիական կապի համակարգի ընդլայնման և արդիականացման, և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով նախատեսվում էր իրականացնել 3 466 մլն դրամի ներդրումներ:

Փաստացի իրականացվել են 3 303,9 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 3 297,9 մլն դրամի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Հաշվետու տարում **«Հաշվառման համակարգի վերականգնում, վերակառուցում և արդիականացում»** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 808,9 մլն դրամ՝ գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչների, մեմբրանային գազահաշվիչների արկղերի, էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրադարձային գազահաշվիչների ծախսաչափային հանգույցների (ներառյալ համապատասխան սարքավորումներով համալրված արկղերը) և այլ սարքերի ձեռքբերման նպատակով:

Փաստացի իրականացվել են 256,0 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 255,6 մլն դրամի աշխատանքներ:

Այս ենթաուղղության ***«Մեմբրանային գազահաշվիչների համար էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում և տեղադրում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր 26,5 մլն դրամ ուղղել 100 էլեկտրոնային ճշտիչներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 35,4 մլն դրամի ներդրումներ:

«Էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրադարձային գազահաշվիչների ծախսաչափային հանգույցների (ներառյալ համապատասխան սարքավորումներով համալրված արկղերը) ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 700,6 մլն դրամ ներդնել 450 ծախսաչափային հանգույցների ձեռքբերման և տեղակայման նպատակով:

Փաստացի ներդրվել է 178,0 մլն դրամ, որի արդյունքում տեղակայվել են 177,7 մլն դրամի գազահաշվիչներ՝ իրենց ծախսաչափային հանգույցներով:

«Դիսկրետ չափիչ օղակներում ճնշման անկման սկզբունքով աշխատող ծախսաչափային հանգույցների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 75,0 մլն դրամ ներդնել ծախսաչափային հանգույցների ձեռքբերման

և տեղակայման նպատակով: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 30,8 մլն դրամի ներդրումներ:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 488,7մլն դրամ՝ նոր սերնդի ծախսաչափերի, ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների, գազի ճնշման կարգավորիչների ձեռքբերման և տեղադրման, տարբեր սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 641,8 մլն դրամի ներդրումներ, որից 641,7մլն դրամը հանձնվել են շահագործման:

«Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր 302,4 մլն դրամ ներդնել 12 հազար ազդանշանային սարքեր և անջատիչ վթարային կափույրներ տեղակայելու ուղղությամբ:

Հաշվետու տարում նշված ենթաուղղությամբ 300,7 մլն դրամ ընդհանուր արժեքով տեղակայվել են 11 109 հատ սարքեր:

«GSA-70 գազի ճնշման կարգավորիչների ձեռքբերում և տեղադրում” ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 46,0 մլն դրամ 170 սարքավորումներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Հաշվետու տարում տեղակայվել են 242 ճնշման անհատական կարգավորիչներ 46,4 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«GSA-100 գազի ճնշման անհատական կարգավորիչների ձեռքբերում և տեղադրում” ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 66,0 մլն 240 սարքավորումներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Հաշվետու տարում տեղակայվել են 350 ճնշման անհատական կարգավորիչներ 71,6 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում» ուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 40,6 մլն դրամ: Հաշվետու տարում ներդրվել է 88,8 մլն դրամ:

Տվյալ ենթաուղղությամբ ավարտված աշխատանքների ծավալում ներկայացված են 133,1 մլն դրամ ընդհանուր ծավալով սարքեր, որոնք ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն:

«Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում» ուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 75,3 մլն դրամ՝ համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 119,5 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

«Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռք բերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 45,3 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 45,4 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գույքի ձեռքբերում" ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 30 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 27,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում, վերասարքավորում և հիմնանորոգում» ուղղությամբ 2015թվականին նախատեսվում էր ներդնել 1 407,5 մլն դրամ 128 մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և 115 մեքենաների վերասարքավորման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 1 646,2 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 1 643,9 մլն դրամի ներդրումներ:

«Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 552,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 55 միջին և փոքր դասի մեքենաների և երկուական ավտոբուս և միկրոավտոբուս:

Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (միջին դասի) ենթաուղղությամբ նախատեսվում էր 280 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 28 մեքենաներ: Հաշվետու տարում ձեռք է բերվել 854,7 մլն դրամի38 ավտոմեքենա:

Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (փոքր դասի) ենթաուղղությամբ նախատեսվում էր 216,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 27 մեքենաներ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 14,9 մլն դրամի 3 մեքենաներ:

Ավտոբուսների ձեռքբերում ենթաուղղությամբ նախատեսվում էր 30,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 2 ավտոբուս:

Հաշվետու տարում ձեռք են բերվել 2 ավտոբուսներ՝ 76,6 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

Միկրոավտոբուսների ձեռքբերում ենթաուղղությամբ նախատեսվում էր 26,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 2 միկրոավտոբուս: Հաշվետու տարում ձեռք է բերվել մեկ ավտոբուս՝ 19,6 մլն դրամ արժողությամբ:

«Վթարային ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 624,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 60 վթարային մեքենաներ:

Թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա մինչև 1 տոննա բեռնատարողությամբ մարդատար-բեռնատար գազի վթարային ավտոմեքենաների ձեռքբերում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 38,5 մլն դրամ՝ 7 մեքենա ձեռքբերելու նպատակով: Հաշվետու տարում ձեռք են բերվել 7 ավտոմեքենաներ՝ ընդհանուր 33,2 մլն դրամ արժեքով:

Բարձր անցունակությամբ մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ մարդատար-բեռնատար գազի վթարային ավտոմեքենաների ձեռքբերում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 220 մլն դրամ՝ 10 մեքենա ձեռքբերելու նպատակով:

Հաշվետու տարում ձեռք են բերվել 10 ավտոմեքենաներ՝ ընդհանուր 197,8 մլն դրամ արժեքով:

Մինչև 2 տոննա բեռնատարողությամբ գազի վթարային ավտոմեքենաների ձեռքբերում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 365,5 մլն դրամ՝ 43 մեքենա ձեռքբերելու նպատակով: Հաշվետու տարում ձեռք են բերվել 43 ավտոմեքենաներ՝ ընդհանուր 260,2 մլն դրամ արժեքով:

«Բեռնատար ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 64,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 8 բեռնատար մեքենաներ: Փաստացի ձեռք են բերվել 7 բեռնատար մեքենաներ՝ 47,5 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Հատուկ նշանակության ավտոմեքենաների ձեռքբերում” ենթաուղղությամբ նախատեսվում էր 70,0 մլն դրամ ձեռքբերել գազատարերի եռակցման կարերի ստուգման ավտոլաբորատորիա: Փաստացի վերջինս ձեռք է բերվել 35,6 մլն դրամ արժողությամբ:

«Ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար» ենթաուղղությամբ նախատեսվում էր 51,4 մլն դրամ ծավալով իրականացնել 115 հատ ավտոմեքենաների վերասարքավորում: Փաստացի 45,9 մլն դրամ ծավալով իրականացվել է 81 հատ մարդատար և բեռնա-մարդատար մեքենաների վերասարքավորում:

Թեթև մարդատար (միջին դասի) օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 7,5 մլն դրամ՝ 18 մեքենայի վերասարքավորում: Հաշվետու տարում 7,5 մլն դրամով վերասարքավորել է 14 մեքենա:

Թեթև մարդատար (փոքր դասի) օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 11,3 մլն դրամ՝ 27 մեքենայի վերասարքավորում: Հաշվետու տարում վերասարքավորվել է 5 մեքենա՝ 2,1 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 2,4 մլն դրամ՝ 7 բեռնատար մեքենայի վերասարքավորում: Հաշվետու տարում վերասարքավորվել են 7 մեքենա՝ 3,2 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ բարձր անցողունակության վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 21,5 մլն դրամ՝ 43 վթարային բեռնատար մեքենայի վերասարքավորում: Հաշվետու տարում վերասարքավորվել են 48 մեքենա՝ 28,8 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 3,3 մլն դրամ՝ 8 բեռնատար մեքենայի վերասարքավորում: Հաշվետու տարում վերասարքավորվել են 7 մեքենա՝ 4,1 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«*Շշահագործվող ավտոտրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում*» ենթաուղղությամբ նախատեսվում էր 9,0 մլն դրամ ծավալով իրականացնել 18 ավտոմեքենաների ամբողջական վերականգնում:

Փաստացի 11,9 մլն դրամ ծավալով իրականացվել է 26 հատ մարդատար և բեռնա-մարդատար մեքենաների վերականգնման աշխատանքներ:

«Մեխանիզմների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 37,1 մլն դրամ ծավալով մեխանիզմների ձեռքբերում: Փաստացի իրականացվել և շահագործման է հանձնվել 46,0 մլն դրամի էքսկավատոր ամբարձիչ:

«Նոր շենքերի և շինությունների կառուցում» ենթաուղղությամբ ներկայացված են 0,5 մլն դրամի ներդրումային ծրագրով չհամաձայնեցված աշխատանքներ:

«Շենքերի և շինությունների վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 2015 թվականին 538,8 մլն դրամ ուղղել

ընկերության վարչական շենքերում վերականգնման և վերակառուցման աշխատանքներ իրականացնելուն: Փաստացի իրականացվել են 557,7 մլն դրամի ներդրումներ, որից 557,5 մլն դրամը հանձնվել է շահագործման:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի վերակառուցում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր ներդնել 89 մլն դրամ:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 99 մլն դրամի աշխատանքներ:

«ԳԳՄ-ների վարչական շենքերի, ԳԿԿ-ների և այլ շինությունների վերականգնում և վերակառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 439,9 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 425,3 մլն դրամի աշխատանքներ, որից 425,1 մլն դրամի աշխատանքները հանձնվել են շահագործման:

«Կորպորատիվ տեխնոլոգիական կապի ընդլայնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր 69,7 մլն դրամ ուղղել ընկերության կորպորատիվ համակարգչային ցանցի արդիականացմանը և IP հեռախոսակապի տեղակայմանը:

"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ վարչական շենքի և մասնաճյուղերի համակարգչային ցանցի արդիականացման նպատակով 2015 թվականին համաձայնեցված էր 58,9 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 62,9 մլն դրամ ընդհանուր արժեքով ակտիվներ:

"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ վարչական շենքի և մասնաճյուղերի հեռախոսակապի արդիականացման նպատակով 2015 թվականին համաձայնեցված էր 10,8 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել հեռախոսազանգերի ձայնագրման համակարգեր՝ 8,8 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 247,8 մլն դրամ ծավալով, որոնք նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից:

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումների ուղղության մնացած ենթաուղղություններով 2015 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

ԲԱԺԻՆ 4.
Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա

Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է նաև սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համեմատական վերլուծություն 2014 և 2015 թվականների համար: Մասնավորապես ուսումնասիրվել են ընդհատումների միջին տևողության (SAIDI) և ընդհատումների միջին հաճախականության (քանակի) (SAIFI) ցուցանիշները: Նշված ցուցանիշները բնութագրում են մեկ բաժանորդին բաժին ընկնող անջատումների տևողությունն ու քանակը և համաշխարհային պրակտիկայում օգտագործվում են որպես հուսալիության չափորոշիչներ: Վերլուծության ընթացքում դիտարկվել են միայն այն դեպքերը, երբ ընդհատման պատճառ են հանդիսացել գազամատակարարման ցանցում առաջացած վթարները և ընկերությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքներով 2015 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը բարելավվել է միջինում 27%-ով՝ կազմելով 283,8 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականությունը (քանակը)՝ միջինում 10%-ով՝ կազմելով 0,43 ընդհատում/բաժանորդ: Նշված ցուցանիշների միջին մեծության դրական փոփոխությունը հիմնականում պայմանավորված է Երևան քաղաքում և Արարատի մարզում ցուցանիշների էական բարելավմամբ: Մնացած մարզերում, բացառությամբ Արագածոտնի և Սյունիքի մարզերի, ցուցանիշներն վատթարացել են: Մասնավորապես Տավուշի մարզում ընդհատումների միջին տևողության ցուցանիշն աճել է 14,5 անգամ, իսկ ընդհատումների միջին հաճախականության ցուցանիշը՝ 5,5 անգամ:

ԲԱԺԻՆ 5.
Իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված գնումների արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է ընկերության կողմից ձեռքբերված ապրանքների, ինչպես նաև կապալառու ընկերությունների կողմից իրականացվող աշխատանքների ընթացքում պատվիրատուի կողմից տրամադրվող

նյութերի գնային վերլուծություն: Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների շուկայական գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ որոշ սարքավորումների ձեռք բերման գները միջինում 6%-ով գերազանցում են շուկայական միջին գները կամ ներդրումային ծրագրով համաձայնեցված միավորի միջին գինը:

Կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների ընտրանքային ուսումնասիրության և դրանց շուկայական գների հետ համադրության արդյունքում 29 ակտերից 16-ում գները միջինում 23%-ով գերազանցում են շուկայականը: Մնացած ակտերում էական գերազանցումներ չեն հայտնաբերվել:

ԲԱԺԻՆ 6.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

6.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2015 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 9 144,3 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. 424,8 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով,
2. 87,3 մլն դրամ նվազեցվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ակտերում առկա գումարների և շուկայական գների համեմատության արդյունքում,
3. Ընկերության կողմից իրականացված գնումների վերլուծության և դրանց՝ շուկայական գների հետ համադրության արդյունքում 537,8 մլն դրամ նվազեցվել է տեղակայման ենթակա սարքերի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների գներից,

4. Համաձայն ընկերության ուղարկած էլեկտրոնային գրության, աշխատանքի վարձատրության գծով 245,7 մլն դրամից ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցների ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 202,1 մլն դրամի ներդրումներ: Ուստի ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված 203,6 մլն դրամ ծավալով կապիտալացված աշխատավարձի ուղղությամբ իրականացված ծախսումներից ընդունվել են միայն ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցներին ուղղված 167,5 մլն դրամի աշխատավարձի ուղղությամբ ծախսումները, իսկ 36,1 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
5. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 32,5 մլն դրամ, իսկ լուծարված հիմնական միջոցների դեպքում լուծարման արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 99,1 մլն դրամ, նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,
6. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 252,6 մլն դրամով, որը և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ հետևյալ ենթաուղղություններով.
   - մայրուղային գազատարերի վերականգնում, վերատեղադրում և փոխարինում՝ 13,9 մլն դրամ,
   - ԳԲԿ-ների և ՉՀ-ների էլեկտրամատակարարման համակարգի, շանթարգելների և սարքավորումների հողանցման կոնտուրների վերականգնում՝ 0,06
   - Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդնում՝ 26,5 մլն դրամ,
   - ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում՝ 7,8 մլն դրամ,

- բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում՝ 83,01 մլն դրամ,
- գազաբաշխիչ ցանցի գազատարների վերականգնում և վերակառուցում՝ 30,1 մլն դրամ,
- ԷՔՊ կայանքների վերականգնում և արդիականացում՝ 2,4 մլն դրամ,
- մեմբրանային գազահաշվիչների համալրման համար ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում և տեղադրում (ներառյալ՝ արկղերի ձեռքբերումը)՝ 7,5 մլն դրամ,
- չափիչ և հատուկ նշանակության սարքերի, սարքավորումների և գործիքների ձեռքբերում՝ 48,1 մլն դրամ,
- ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում, վերասարքավորում և հիմնանորոգում՝ 19,2 մլն դրամ,
- շենքերի և շինությունների վերականգնում և վերակառուցում՝ 9,9 մլն դրամ
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչական շենքի և մասնաճյուղերի համակարգչային ցանցի արդիականացում՝ 3,99 մլն դրամ,

6.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**9 459,3**
2	**Անավարտ աշխատանքներ**	**315,0**
3	**2015 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**9 144,4**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**1 470,4**
4.1	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված ներդրումներ	424,8
4.2	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	625,1
4.2.1	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքներից	87,3
4.2.2	Գնումների վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	537,8
4.3	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	36,1
4.4	Օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներ	131,7
4.5	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	252,7
5	**2015 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**7 674,0**
6	**«Գազբաշխիչ ցանցի ընդլայնում՝ նոր գազատարների կառուցում» ենթաուղղությամբ 2014 թվականի ընթացքում իրականացրած և 2015 թվականին շահագործման հանձնված ներդրումներ**	**34,2**
7	**Ընդամենը սակագնով փոխհատուցման ենթակա**	**7 708,2**

Եզրակացություններ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 91%-ով: Ներդրումները հիմնականում ուղղվել են Գազաբաշխման համակարգին:

2. Գազամատակարարման ցանցին են միացել 9 440 նոր բաժանորդներ և 14 478 բաժանորդների մոտ տեղադրվել են ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ: Արդյունքում գազամատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 670 826:

3. Ընկերության պատվերով կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների (հումք-նյութերի, սարքավորումների և աշխատանքների) գների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում դրանք գերազանցում են համանման աշխատանքների շուկայական արժեքները:

4. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 9 144,3 մլն դրամի ներդրումներ, որոնցից 625.1 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 7%-ը, համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

5. 2014 թվականի համեմատությամբ 2015 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը բարելավվել է միջինում 27%-ով՝ կազմելով 283,8 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականությունը (քանակը)՝ միջինում 10%-ով՝ կազմելով 0,43 ընդհատում/բաժանորդ: Նշված ցուցանիշների միջին մեծության դրական փոփոխությունը հիմնականում պայմանավորված է Երևան քաղաքում և Արարատի մարզում ցուցանիշների էական բարելավմամբ: Մնացած մարզերում, բացառությամբ Արագածոտնի և Սյունիքի մարզերի, ցուցանիշներն վատթարացել են:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի№439Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 1-ի№57Ա որոշումը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Որոշում 3 –	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 9-ի№410Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 1-ի №57Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին».
Հաշվետվություն-	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2015 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2016 թվականի մայիսի 10-ի №01-25/2404 գրությամբ ներկայացված հաշվետվությունը.
Տեղեկատվություն 1 -	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները 2014, 2015 թվականներին http://psrc.am/am/sectors/gas/service-quality-indicators 2014, 2015 թվականների ընթացքում գազամատակարարման համակարգում սպառողների գազամատակարարման ընդհատումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն
Տեղեկատվություն 2 -	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի ընթացքում գազամատակարարման համակարգին միացված բաժանորդների քանակը http://armenia-am.gazprom.com/press/news/2016/01/1139/